



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հ Ր Ա Մ Ա Ն

« 13 » « օգոստոս » 2019 թ. № 268-Ն

«ՎԱԿՈՒՖԼՕ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԱՐԱԳԱԾ-1»
ՀԻԴՐՈԷԼԵԿԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ N 000166
ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Վակուֆլո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2012 թվականի հոկտեմբերի 12-ին փոքր հիդրոէլեկտրակայանի շահագործման նպատակով տրամադրված N 000166 ջրօգտագործման թույլտվության պայմանները՝ պարզվել է, որ «Վակուֆլո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը փոքր հիդրոէլեկտրակայանը շահագործում է ջրօգտագործման թույլտվության պայմանների խախտմամբ, այն է՝ փոքր հիդրոէլեկտրակայանի ջրահեռացումից հետո տեղի է ունենում ջրային ռեսուրսի որակական փոփոխություն, այն ինչ ջրօգտագործման թույլտվությամբ պայմանների 10-րդ կետով ամրագրված է, որ փոքր հիդրոէլեկտրակայանի ջրահեռացումից ջրի որակական փոփոխություն տեղի չի ունենում: Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատարի 2019 թվականի հուլիսի 17-ի N 5/18.1/51824-19 գրությամբ ընկերությունը ծանուցվել է ջրային օրենսգրքի 30.2 հոդվածի համաձայն 15 աշխատանքային օրվա ընթացքում փոքր հիդրոէլեկտրակայանի գործունեությունը ջրօգտագործման թույլտվության պայմաններին համապատասխանեցնելու վերաբերյալ, ինչը ընկերության կողմից չի կատարվել: Շրջակա միջավայրի նախարարությունն իր 2019 թվականի օգոստոսի 2-ի N5/18.1/52019 գրությամբ «Վակուֆլո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը լսելու նպատակով հրավիրել է քննարկման, ինչը կայացել է: Ղեկավարվելով ջրային օրենսգրքի 30.2 հոդվածի 5)-րդ կետով ու նախավերջին պարբերությամբ և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով:

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Կասեցնել՝ «Վակուֆլո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2012 թվականի հոկտեմբերի 12-ին «Արագած-1» փոքր հիդրոէլեկտրակայանի շահագործման նպատակով տրամադրված N 000166 ջրօգտագործման թույլտվությունը:
2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից 2 (երկու) ամսվա ընթացքում:

ՆԱԽԱՐԱՐ

Է.ԳՐԻԳՈՐՅԱՆ

<< 13 >> օգոստոս 2019թ.
թ.երևան

